



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

—————ի 2023 թվականի N° -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N°520-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի «էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N°359-Ն, 2007 թվականի հունիսի 15-ի N°275-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N°520-Ն որոշման N°1 հավելվածում՝ էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկայում (այսուհետ՝ Մեթոդիկա) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝
 - 1) Մեթոդիկայի 19-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 - «2) Հաղորդողի դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta \text{ԱՀ} = \sum_{i=1}^m \left((F_i^C - F_i^P) * U_i - G_i^C + G_i^P + \Delta G_i^P \right) * \left(1 + \frac{m * S}{100\%} \right), \text{ որտեղ՝}$$

ա. **ԳԷՀ-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների և Հաղորդողի սեփական ու տնտեսական կարիքների համար գնվող էլեկտրական էներգիայի հաշվարկային արժեքն է (դրամ),

բ. **ԳԷՀՓ-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների և Հաղորդողի սեփական ու տնտեսական կարիքների համար գնված էլեկտրական էներգիայի փաստացի արժեքն է (դրամ), ընդ որում նշված էլեկտրական էներգիան Հաղորդողի էլեկտրակայանում արտադրվելու դեպքում վերջինիս արժեքն այդ մասով որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար Հանձնաժողովի սահմանած Հաշվեկշռման նվազագույն սակագնով,

գ. **ΔԳԷՀՓ-ն** Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար էլեկտրական էներգիան Սակագնի հաշվարկում նախատեսվածի համեմատ առավել էժան գնով ձեռքբերելու արդյունքում i-րդ ամսում առաջացած խնայողության՝ Հաղորդողին թողնվող գումարն է (դրամ), որն ընդունվում է սույն մեթոդիկայի 19.1-ին կետով նախատեսված բանաձևով հաշվարկված մեծությանը հավասար, եթե այն դրական նշանով է, և ընդունվում է զրո, եթե այն բացասական նշանով է,».

2) Մեթոդիկան լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1-ին կետով.

«19.1. Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար էլեկտրական էներգիան Սակագնի հաշվարկում նախատեսվածի համեմատ առավել էժան գնով ձեռքբերելու արդյունքում i-րդ ամսում առաջացած խնայողության՝ Հաղորդողին թողնվող գումարը ($\DeltaԳԷՀՓ_i$) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\DeltaԳԷՀՓ_i = (ԳԷԾ_i^\Phi * ՄՄ_i^Հ - ԳԷԱ_i^\Phi - ԱՆՀ_i^{\PhiԲ} + ԱՆՀ_i^{\PhiԴ}) * 0.5 , որտեղ՝$$

1) **ԳԷԾ-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար փաստացի ձեռքբերված էլեկտրական էներգիայի քանակն է՝ առանց ԷՄՇ ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում ձեռքբերված և Հաղորդողի էլեկտրակայանում արտադրված էլեկտրական էներգիայի (կՎտժ),

2) ՄՄՀ-ն i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար ձեռքբերվող էլեկտրական էներգիայի (առանց ԷՄՇ ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում ձեռքբերվող և Հաղորդողի էլեկտրակայանում արտադրվող էլեկտրական էներգիայի) միջին կշռված սակագնի հաշվարկային մեծությունն է (դրամ/կՎտժ),

3) **ԳԷԱՓ-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար փաստացի ձեռքբերված էլեկտրական էներգիայի արժեքն է՝ առանց ԷՄՇ ուղիղ

պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում, հաշվեկշռման շուկայում ձեռքբերված և Հաղորդողի էլեկտրակայանում արտադրված էլեկտրական էներգիայի արժեքի (դրամ),

4) ԱՆՀԻՓԲ-ն i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների ձեռքբերման արդյունքում առաջացած բացասական անհաշվեկշռույթի դեպքում ԷՄՇ հաշվեկշռման շուկայում գնված էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ),

5) ԱՆՀԻՓԴ-ն i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների ձեռքբերման արդյունքում առաջացած դրական անհաշվեկշռույթի դեպքում ԷՄՇ հաշվեկշռման շուկայում և ԷՄՇ այլ բաղադրիչներում վաճառված էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ):».

3) Մեթոդիկայի 21-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
_____ի 2023թ.